ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ԻՆՃԻԿՅԱՆ

Առաջադրված խնդիրը ունի խոշոր գիտական և քաղաքական նշանակություն։ Նրա բարեխիղճ և անկողմնակալ վերլուծումը, անշուշտ, ճիշտ ելակետ կհանդիսանա ուսումնասիրելու և գիտականորեն մեկնաբանելու պատմության կարևորագույն էջերը, ինչպես նաև բացատրելու ժամանակակից Թուրքիայի տնտեսական դրության որոշ խնդիրներ։ Երևի այս հանգամանքը արծարծվող պրոբլեմը իրապես դարձրել է այնքան հրատապ ու կենսական, որ վերջին տասնամյակում Թուրք պատմաբանները, սոցիոլոգները, պետական գործիչները և ընդհանրապես մտավորականները բազմաթիվ գրքերում և հոդվածներում արտացոլել են իրենց տեսակետները քննարկվող հարցի վերաբերյալ։ Մոտ երկու տասնյակ ուսումնասիրություններ և մենագրություններ հատկապես նվիրված են Օսմանյան կայսրության և Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր խնդիրներին։ Նշված աշխատություններից ուշադրության արժանի են Թուրքիայի բանվորական կուսակցության լիդերներից մեկի՝ Բեհիջե Բորանի «Թուրքիան և սոցիալիզմի պրոբլեմները»[1] գիրքը, հայտնի սոցիոլոգ և լրագրող, «Յոն» («Ուղղություն») առաջադիմական պարբերականի խմբագիր Դողան Ավջիօղլուի մի քանի անգամ վերահրատարակված երկհատոր ուսումնասիրությունը Թուրքիայի հասարակական կարգի[2] վերաբերյալ, Հ. Եոզգենի «Թուրքիայի տնտեսական պրոբլեմները»[3], Մ. Սենջերի «Օսմանյան հասարակարգը»[4], Յըլդըզ Սերտելի «Թուրքիայի պրոգրեսիվ հասարակական հոսանքները և զարգացման պրոբլեմները»[5], Օյա Սենջերի «Թուրքական հասարակարգի պատմական զարգացումը»[6], Ի. Ջեմի Թուրքիայի հետամնացության պատճառների մասին[7] գրքերը և մի շարք այլ աշխատություններ։ Նույն նպատակին են ծառայում հարցի տարբեր կողմերը պարզաբանող բազմաթիվ ուսումնասիրություններ։ Վերջինների թվին են պատկանում Ս. Ակսոյի «Հողային հարցը Թուրքիա-

---

[1] B. Boran, Türkiye ve sosyalizm sorunları, İstanbul, 1968.

[2] D. Avcıoğlu, Türkiye'nin düzeni (Dün, Bugün, Yarın), cilt 1—2, Ankara, 1969.

[3] H. Özgen, Economic sorunlarımız, Ankara, 1969.

[4] M. Sencer, Osmanlı toplum yapısı, İst., 1969.

[5] Y. Sertel, Türkiye'de ilerici akımlar ve kalkınma davamız, İst., 1969.

[6] O. Sencer, Türk toplumunun tarihsel evrimi, İst., 1969.

[7] İ. Cem. Türkiye'de geri kalmışlığın tarihi, İst., 1971.

յում»[8], Կ. Բուլութօղլուի «Թուրքական հարկային սիստեմը»[9], Կ. Ֆիշեկի «Թուրքիայում կապիտալիզմի զարգացումը և բանվոր դասակարգը»[10] և այլն։ Թուրք հեղինակները իրենց գործերում աշխատում են հայտնաբերել ու հիմնավորել «օսմանյան հասարակարգի» զարգացման օրինաչափությունները, կատարել ընդհանրացնող եզրակացություններ։ Սակայն հեղինակների մի զգալի մասի ելակետը չափազանց անորոշ է, մնացածները շրջանցում են հանրահայտ վիճաները և պատմական իրականությունը։ Հետևանքը այն է, որ նրանց ամփոփումները հաճախ հեռու են ճշմարտացի լինելուց և մեղանչում են պատմության առջև։ Ընդհանուր թերությունը, մեր կարծիքով, վերացական եզրահանգումներն են և գիտական վերլուծության բացակայությունը։ Ինչպես նշում էր Թուրքիայի էկոնոմիկան ուսումնասիրող սովետական առաջին տնտեսագետներից մեկը՝ Կ. Վասիլևսկին, թուրք բուրժուական հեղինակները համարյա անխտիր կերպով տուրք են տալիս նացիոնալիզմին։ Նրանք, գրում էր Վասիլևսկին, իրենց աշխատություններում «բացասում և թողարկում են ազգային հարցը Թուրքիայում» և ամեն ինչ ներկայացնում են որպես «թուրքական»։ Նման միտումնավոր մեկնաբանումը «անբարենպաստ կերպով է անդրադառնում թե՛ հրատարակված գործերի գիտականության և թե՛ թուրքական իրականության ծանոթ ընթերցողի հոգեբանության վրա...»[11]։

Նշված աշխատությունների դրական կողմը, որը չի կարելի անտեսել, այն է, որ հեղինակները քննադատորեն են պատկերում կայսրությունում տիրող դրությունը։ Ահա են կառավարական շրջանների տնտեսական բաղաքականությունը վերլուծելու փորձեր, ցույց են տրված սոցիալական անհավասարությունը, տիրող կամայականությունը, տնտեսությունը քայքայող հարկային սիստեմը, գյուղի աղքատացումը, օտար կապիտալի ազդեցության հետևանքները և այլ բացասական կողմեր, որոնք բնորոշ էին կիսագաղութ դարձած ռազմա-ֆեոդալական օսմանյան պետության համար։

Սակայն մեզ հայտնի չէ թուրք հեղինակի որևէ աշխատություն, որտեղ գիտական քննարկման ենթարկվեին նշված երևույթների արմատները, մասնավորապես թուրքական ֆեոդալական ռեժիմի ազդեցությունը և հետևանքները երկրի տնտեսական, բաղաքական և կուլտուրական զարգացման վրա։ Բացառություն է կազմում թուրք կոմունիստ Խալիս Օքանի «Կապիտալիզմի զարգացումը Թուրքիայում» բուլղարերեն լույս տեսած դիրքը[12]։ Հենվելով մարքսիզմի կլասիկների երկերի և սովետական արևելագետների աշխատությունների տվյալների վրա, հեղինակը կարողացել է ստեղծել ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ու զարգացման ընդհանուր պատկերը և ցույց տալ, որ Թուրքիայում ևս հասարակական առաջընթացի փուլերը նույնն են, ինչ որ ուրիշ երկրներում։

---

[8] S. Aksoy, Türkiye'de toprak meselesi, Ist., 1969.

[9] K. Bulutoglu, Turk vergi sistemi, Ist., 1967.

[10] K. Fişek. Türkiye'de kapitalizmin gelişmesi ve isci sınıfı, Ankara, 1969.

[11] Каземир В-ий. Турецкая экономика в описании самих турок, «Новый Восток», 1930, № 8, էջ 241։

[12] Х. Окан. Развитие на капитализма в Турция, София, 1961.

Միանգամայն այլ են թուրք հեղինակների տեսակետները Օսմանյան կայսրության զարգացման ուղիների և էտապների մասին։ Ամենից առաջ նշենք թուրք պատմագրության տենդենցը կամ ձգտումը՝ պատմական առաջընթացի ձևերի և էության հարցերում տարբերվել մյուս ժողովուրդներից ու պետություններից։ «Օսմանյան հասարակարգի կառուցվածքն ուսումնասիրող մեր պատմաբանները,— գրում է Մ. Սենջերը,— ոչ միայն չէին ձգտում նմանեցնել նրան որոշ ընդհանուր տիպի, այլ ընդհակառակը, ուզում էին լինում ցույց տալ ընդհանուր տիպերից նրան բաժանող յուրահատկությունները»[13]։ Մեկ այլ հեղինակի՝ Ի. Ջեմի կարծիքով օսմանյան կարգերը թուրքերի համար չափազանց հարմար ու լավ էին և զարգանում էին իրենց հունով մինչև եվրոպական ազդեցությունների մուտքը Թուրքիա։ Եվրոպական կացութաձևի ներթափանցումը, տնտեսության «լիբերալիզացիան», հողի մասնավոր սեփականության օրինականացումը, մասնավոր կապիտալի ազատ գործունեությունը, օտարներին ընձեռած ազատ առևտրի իրավունքը և նման մի շարք միջոցառումները հանդեցրին երկրի բացարձակ թալանին և շահագործմանը։ Թանզիմաթը հեշտացրեց և խորացրեց այդ պրոցեսը։ Եվրոպականացումը,— ամփոփում է հեղինակը իր միտքը,— «ուժեղացնելով գոյություն ունեցող հասարակական և տնտեսական քայքայումը, հանդիսացավ կայսրության անկման հիմնական պատճառներից մեկը»[14]։

Արտաքին ազդեցությունը որպես օսմանյան պետության ճգնաժամի գլխավոր գործոն ներկայացնելու մեջ Ջեմը մենակ չէ։ Այդ տեսակետն են պաշտպանում բազմաթիվ հրատարակությունների հեղինակ, պատմաբան Օ. Լ. Բարկանը, սոցիոլոգ Կ. Ֆիշեկը, մասամբ Մ. Սենջերը և ուրիշներ։

Սակայն կան միանգամայն հակառակ տեսակետը ներկայացնող մտավորականներ, պետական գործիչներ, պատմաբաններ ու սոցիոլոգներ։ Վերջիններս Օսմանյան կայսրության տնտեսական հետամնացությունը համարում են զարգացման եվրոպական ուղու անբավարար և անհետևողականորեն կիրառելու արդյունք։ Այսպես, դոկտոր Մյումթազ Թուրհանը «Եվրոպականացման ո՞ր փուլում ենք գտնվում» խորագիրը կրող իր գրքում արտահայտում է այն միտքը, որ բոլոր ռեֆորմների գլխավոր նպատակը եղել է «հիմնականում արևմտյան քաղաքակրթության» մուտքը Թուրքիա, որը և հանդեցրել է «ճանաչված քաղաքակրթության օրենքների, կազմակերպությունների, սովորույթների սոսկ պատճենահանմանը» և մանավանդ Արևմուտքի առանձին ժողովուրդների «հագուստի, ապրելակերպի» ընդունմանը[15]։ Ճշտելով տվյալ գրույթը, Օյա Սենջերը ռեֆորմատորական ողջ շարժումը, սկսած Թանզիմաթից, համարում է մի շարժում, որը ընթանում էր հետևյալ նշանաբանով՝ «շրջադարձ դեպի Արևմուտք, արևմտյան կազմակերպությունների փոխառնում, բարեփոխությունների կենսագործում՝ միայն այդ ուղղությամբ»[16]։ Հիշյալ շարժման սկիզբը Կ. Ֆիշեկը համարում է Կոստանդնուպոլսի գրավումը 1453 թ. թուրքերի կողմից, որը, հեղինակի կարծիքով, հանդեցրեց Արևմուտքի ազդեցության ապահովմանը պատմության հետագա

---

[13] M. Sencer, նշվ. աշխ., էջ 44։
[14] I. Cem, նշվ. աշխ., էջ 218։
[15] Dr. M. Turhan, Carplılaşmanın neresindeyiz? Ist., 1961, էջ 13։
[16] O. Sencer, նշվ. աշխ., էջ 42։

ամբողջ ընթացքում։ Մի շարք աշխատություններում առաջ է քաշվում այն տեսակետը, որ տիրող շրջանները «առողջ տնտեսական քաղաքականություն չեն վարել»[17], որովհետև իրենք ունեցել են կրթական ցածր մակարդակ և չեն մտածել ժողովրդական լուսավորության մասին, կամ չեն կարողացել հաղթահարել երկրում տիրապետող «հետադիմական մտածելակերպը»[18]։

Արտահայտվել են նույնիսկ այնպիսի կարծիքներ, որ իբր կայսրության հետամնացությունը կապված է եղել բնակչության բազմազգ ու բազմացեղ լինելու հետ, որ առանձին հպատակ ժողովուրդներ, զարգացման ցածր աստիճանի վրա գտնվելով, ետ են քաշել նաև տիրապետող թուրք ժողովրդին[19]։ Չհիմնավորված բազմաթիվ հար և նման տեսակետների մեջ տարբերվում է Մ. Սենջերի կարծիքը այն մասին, որ թուրքերը չեն անցել ֆեոդալիզմի շրջանը, այլ ապրել են Կ. Մարքսի կողմից նշված, այսպես կոչված, «ասիական արտադրաեղանակի» պայմաններում[20]։ Հեղինակը փորձում է ապացուցել, որ իբր ֆեոդալական հասարակարգի բացակայությունը, հողի պետական սեփականությունը, բանակի և ռազմական օրգանների ղեկավար դերը համոզիչ ապացույցներ են այն դրության, որ կապիտալիզմի ձևավորումը չէր կարող լինել «օսմանյան հասարակարգի» ներքին զարգացման հետևանք, ուրիշ խոսքով, իր բնական զարգացման ընթացքով Թուրքիան չպետք է անցներ ֆեոդալիզմի և կապիտալիզմի փուլերով։ «Ասիական արտադրաեղանակը» ֆեոդալիզմին հակադրելու ապարդյուն ջանքերը խանգարում են Մ. Սենջերին տեսնելու, որ առաջինը երկրորդի յուրօրինակ արտահայտությունն է Արևելքի երկրներում։ Հաճախ հիշատակվող և իրականության մեջ գոյություն չունեցած այսպես կոչված «օսմանյան հասարակարգի» լճացման կամ հետամնացության, զարգացման թույլ տեմպերի առկայությունը, ռեֆորմների և իշխանությունների ջանքերի կիրառման անբավարար հետևանքները և մի շարք այլ յուրահատկություններ՝ տիրող հասարակական ու պետական կարգի ուղղակի ծնունդն են և անմիջական արդյունքը։ Նախքան նշված գործոնների ազդեցության վերլուծումը, անհրաժեշտ ենք գտնում նշել, որ գոյություն ունեն նաև կարծիքներ, որոնք կայսրության երբեմնի քաղաքական ու տնտեսական հաջողությունները կապում են պետական կարգի, վարչաձևի առավելությունների հետ և այդ կարգի անկման փաստի մեջ են փնտրում էկոնոմիկայի զարգացման անբավարար վիճակը և ցածր տեմպերը։

Այսպես, ելնելով Թուրքիայի աշխարհագրական դիրքից և բնական հարստություններից, Օ. Կոյմենը հայտարարում է, որ «զուտ տնտեսական իմաստով», իր հայրենիքի տվյալները վատ չեն՝ համեմատած զարգացած կապիտալիստական երկրների տվյալների հետ և որ իբր «Բարձր Դուռը կոնկրետ ու մոտիկից ղեկավարում էր տնտեսությունը», հետևապես, որոշ իմաստով կատարում էր «պրոգրեսիվ դեր»[21]։

---

[17] M. Turhan, նշվ. աշխ., էջ 19—20, E. Z. Karal, Osmanlı tarihi, cilt VIII, Ankara, 1962, էջ 452։

[18] Х. Джиллов. Экономика Турции, Москва, 1971, էջ 30։

[19] B. Y. Abadan, B. Savcı, Türkiye'de Anayasa gelişmelerine bir bakiş, Ankara, 1959, էջ 29—30։

[20] M. Sencer, նշվ. աշխ., էջ 265, 278։

[21] О. Коймен, Империализм свободной торговли. Оттоманская империя V Международный конгресс экономической истории, Ленинград, 10—14 августа, 1970, М., 1970, էջ 5, 10։

Անշուշտ, չի կարելի ժխտել երկրի զարգացման պրոցեսը ընդհանրապես։ Անկախ թուրքական ծանր ռեժիմի պայմաններից, տիրող շրջանների կամքից ու ցանկություններից, կայսրության մասնավորապես ծովափնյա շրջաններում և խոշոր վարչական ու բաղաքական կենտրոնների շուրջը տեղի էին ունենում սոցիալ-տնտեսական զգալի տեղաշարժեր։ «Թուրքիան նույնքան քիչ է մնում անշարժ,— նշել է Մարքսը դեռևս անցյալ դարի կեսերին,— որքան մնացած աշխարհը»[22]։ Կարևոր է այստեղ ճշտել՝ որոնք էին շարժման ակտիվ ուժերը. ում վրա էր այն հենվում և ինչպիսի արգելակներ կային նրա ճանապարհին։

Ֆեոդալական կարգերի քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Օսմանյան կայսրությունում տևեց մի քանի դար։ Ջավթողական պատերազմներին, ինչպես հայտնի է, հետևեց պարտությունների շրջանը և սկսած XVII դարից կայսրությունը ապրեց երկարատև ճգնաժամ։ Ռազմական ուժի թուլացմանը զուգահեռ տեղի էր ունենում ֆեոդալական հարաբերությունների և կազմակերպությունների նեխման ու դանդաղ անկման պրոցեսը։ Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, Թուրքիան ապրեց «տևական, տանջալից անկում և քայքայում, տանջալից մանավանդ ժողովրդի բոլոր աշխատավոր և շահագործվող մասսաների համար»[23]։

Եթե փորձենք կանգ առնել առանձին երևույթների վրա և վերլուծել հիշյալ իրավիճակը, ապա պետք է նշենք, որ բոլոր այն գործոնները, որոնք հանդիսանում էին կայսրության ուժի և հաջողությունների աղբյուր, XVII—XIX դդ. դարձան զարգացումն արգելակող հանգամանքներ։ Ուրիշ խոսքով, Թուրքիայի զարգացումը բնորոշող պատմական գլխավոր կատեգորիաները «Օսմանյան ֆեոդալիզմի» առանձնահատկություններն են, կայսրության հասարակական և պետական կարգը։ Վերջինիս ուժի և կենսունակության աղբյուրը հողի պետական սեփականությունն էր. հարստության այդ հիմնական միջոցը բաժանվում էր ռազմական կամ պետական ծառայության մեջ գտնվող ֆեոդալների և ընդհանրապես զինվորականների միջև։ Ուշ միջնադարում պակասեց պատերազմների թիվը, ինչպես նաև թուրքական զենքի ուժը։ Երկրում տիրապետող ռազմա-ֆեոդալական խավը, որը անմիջականորեն չէր զբաղվում հողի մշակմամբ, շարունակում էր այն պահել իր ձեռքում, աշխատելով դառնալ սեփականատեր, սակայն առանց ռազմական ու պետական պարտավորությունները կատարելու։ Մասնագետների բնորոշմամբ, «հողի պետական սեփականությունը զարգացման որոշ էտապում արգելակում էր նոր տնտեսական ձեռնարկչության տարրերի աճը...»[24]։ Վիճակը բարդացնում էր այն հանգամանքը, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը օգտագործվում էր պիտանի հողերի միայն 5—7 տոկոսը[25]։ Իսկ օգտագործվող հողերի մեծագույն մասը կենտրոնացված էր խոշոր հողատեր-ավատների ձեռքին, որոնք միշտ չէ, որ շահագրգռված էին հողի արդյունավետության բարձրացման մեջ, քանի որ մինչև անցյալ դարի վերջերը նրանց ստացած եկամուտը հաճախ ուղղակի կապված չէր ստացվող բերրից։ Ինչպես ճշմարտացի կերպով նշում է Խ. Օքանը, «օսմանյան ֆեոդալները տնտեսական գոր-

22 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 9, էջ 4։
23 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 696։
24 «О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.)», М., 1962, էջ 367։
25 И. Бутаев, Проблемы Турции, Л., 1925, էջ 45։

ծությամբ՝ հողամասերի շահագործմամբ և առևտրով չէին զբաղվում. հողը լոկ հարկերի ստացման աղբյուր էր։ Հարստացման գլխավոր միջոցը պատերազմներն էին և նրանց հետ կապված թալանը, տուրքը և ստրկությունը...»[26]։

Հնարավոր է, որ թուրք հողատերերի տնտարբերությունը հողային սահմանների նկատմամբ կապ ուներ նշված երևույթի հետ։ Հանրահայտ է, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը երկրում հողաչափում գոյություն չուներ։ Միայն 1913 թ. փետրվարի 5-ին, հայ պատգամավորների պնդմամբ, մեջլիսը օրենք է ընդունում հողաչափության, նրա կենսագործման ձևերի, հողատարածությունների հաշվառման և հիշյալ հարցի հետ կապված այլ խնդիրների մասին[27]։ Սակայն պատերազմը, մի շարք այլ օրենքների հետ, անիրագործելի թողեց նաև հողային այդ օրենքը։ Հողօգտագործման ամենատարածված կարգը վարձակալման տարբեր ձևերն էին, որոնք մտել էին կենցաղի մեջ դեռևս միջին դարերում։ Իսկ XIX դարում, ինչպես նշում է Թուրքիայի ագրարային հարաբերությունների խոշոր գիտակ Տիգրան Արսլանյանը, ամբողջ կայսրությունը իրենից ներկայացնում էր մանր տնտեսությունների մի ծով, տնտեսություններ, որոնք միանգամայն «աննպաստ էին երկրի էկոնոմիկայի զարգացման համար»։ Նույնիսկ խոշոր ֆեոդալների հողային տարածությունները բաժանված էին մանր հողակտորների և հողի մշակումը մեծ մասամբ կատարվում էր մանր հողատիրոջ կամ վարձակալի միջոցով։ Իսկ վերջիններս, շարունակում է հեղինակը, չէին կարող գյուղատնտեսությունը հասցնել բարձր մակարդակի և երկրի համար դարձել էին «հսկայական շարիք»[28]։

Հողատիրության հետամնաց ձևերի կողքին երկրի զարգացումն արգելակող երևույթներից մեկն էլ հարկային սիստեմն էր։ Օսմանյան կայսրության մեջ գոյություն ունեին շարիաթական և սովորութային հարկեր։ Առաջինները համարվում էին հիմնական և դրանց հիման վրա նշանակվում էին հողագործության, անասնապահության, առևտրի, կալվածքների և առհասարակ շարժական ու անշարժ գույքի և այլ հարկեր, թվով 350։ Սովորութային հարկերը նշանակում էր սուլթանը կամ նրա անունից որևէ պետական կազմակերպություն, բարձր պաշտոնյա և այլն՝ պետության կարիքները հոգալու համար։ Այդ հարկերի թիվը հասնում էր 97-ի[29]։ Հարկային սիստեմն ուսումնասիրող համարյա բոլոր հեղինակների կարծիքով ազգաբնակչության համար սարսափելի չէին բուն հարկերը կամ նրանց գումարները։ Ահավոր շարիք էին ներկայացնում «լրացուցիչ» հարկերը և հարկերի գանձման մեթոդները[30]։ Այսպես, տասանորդը կամ «աշարը», որը կաղ-

---

[26] Հ. Օկան, նշվ. աշխ., էջ 10։

[27] Տե՛ս «О правовом положении землевладения в Турецкой Армении». Записка приват-доцента Петроградского университета Н. А. Ленского, Петроград. 1916, էջ 13։

[28] Տե՛ս Дикран Арсланиан, Система сельского хозяйства в Оттоманской империи, Л., 1932. էջ 33։

[29] Տե՛ս «Օտար աղբյուրները հայերի մասին», գ. 7, Թուրքական աղբյուրներ, հատ. Գ։ Երևան, 1972. էջ 230։

[30] Խաժակ, Հարկերը Տաճկահայաստանում, Բաքու, 1903։ Ե. Թոփչյան, Երիտասարդ Թուրքերը և հայերը, Թիֆլիս, 1909։

մում էր սկզբնական շրջանում բերքի 1/10 մասը, կամաց-կամաց ավելացավ և հասավ 1/8-ին, իսկ XIX դարում՝ արդեն բերքի 1/7 մասին։

XVI դարում հաստատված հարկահավաքման կապալային սիստեմը (իլթիզամ) եղավ չարիքներից մեծագույնը՝ ժողովուրդը հանձնվեց կապալառուի բմահաճույքին ու սանձազերծվեց ամեն տեսակ կամայականություն։

Այդ բոլորի հետևանքով զանազան տեսակի մնայուն և մշտապես աճող հարկերը և նրանցից գոյացող պարտքերը աշխատավոր ժողովրդին, մասնավորապես գյուղացիներին հասցրին անելանելի վիճակի։ «Նման հողային ռեժիմի, այդպիսի հարկերի ու պարտքերի պայմաններում,— գրում է Նիյազի Բերքեսը,— գյուղացիության մեծամասնության տնտեսության վերականգնումը բացառվում էր։ Միջակ գյուղացին անգամ հնարավորություն չուներ ո՛չ պարտքերից ազատվելու, և ո՛չ էլ վարկ կամ տեխնիկական օգնություն ստանալու»[31]։

Այդպիսին էր ընդհանուր պատկերը։ Սակայն կային զգալի տարբերություններ ավելի զարգացած ծովափնյա շրջանների, խոշոր կենտրոններին մոտիկ բնակավայրերի և կայսրության հետամնաց մասերի միջև։ Բազմակացությանն այս երկրում տարբեր էին թե՛ զարգացման մակարդակը, և թե՛ տեմպերը։ Նման տարբերություններ բնորոշ էր նաև առանձին ազգերի ու ժողովուրդների համար։ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, ուսումնասիրելով իրերի վիճակը Օսմանյան կայսրությունում, նշել են, որ XIX դարի կեսերին «քաղաքակրթության առաջընթացի» կրողը «ոչ թե թուրքերն» էին, այլ ուրիշ ազգերի ներկայացուցիչները[32]։ Հենց նրանք էլ հանդիսացան նոր, կապիտալիստական հարաբերությունների զարգացնողները։ Ֆ. Էնգելսը ուղղակի գրել է, որ «ամբողջ առևտուրը իրենց ձեռքումն են պահում ծովային մեծ նավահանգիստներում հիմնավորված հույները, հայերը, սլավոնները, արևմտաեվրոպացիները»[33]։ Հանրահայտ է նաև, որ վերոհիշյալ ազգությունների ներկայացուցիչները դարձել էին երկրի հիմնական արդյունաբերողները, կարևորագույն արհեստների և արտադրությունների տերերը և կազմակերպիչները։ Բազմաթիվ ուսումնասիրություններում, հոդվածներում, հաղորդումներում, ճանապարհորդական հուշերում կրկնվում է այն, ինչը որ հաջող կերպով ամփոփել է Դ. Ե. Երեմեևը. «Արհեստներով և առևտրով, այսինքն էկոնոմիկայի հենց այն բնագավառներով, որոնցում ամենից շուտ կարող էր հասունանալ կապիտալիստական կացությանը, զբաղվում էին գլխավորապես ոչ թուրքերը և նույնիսկ ոչ մահմեդականները»[34]։

Բայց ինչո՞ւ էր այդպես։ Որո՞նք էին տվյալ երևույթի օբյեկտիվ պատճառները։ Ամփոփելով եղած կարծիքները և փաստերը, փորձենք պատասխանել այդ հարցին։

Օսմանյան ռազմա-ֆեոդալական կարգերի հիմնական առանձնահատկություններից մեկը թուրք հասարակության կառուցվածքն էր ըստ ռազմական գործի սկզբունքների, հանուն պատերազմական նպատակների և նվաճողական քաղաքականության։ Վաղ շրջանի թուրք օսմանցիների համար պատե-

---

31 B. Niyazi, Iki yüz yıldır neden bocalıyoruz?, Ankara, 1963, էջ 37։

32 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, էջ 25։

33 Նույն տեղում։

34 Д. Е. Еремеев, Этногенез турок, М., 1971, էջ 178։

բազմը, Ֆ. Էնգելսի որակմամբ, «ժողովրդական կյանքի ֆունկցիան» էր հանդիսանում[35]։ Կայսրության տիրող շրջանները մահմեդական ժողովուրդներին դիտում էին որպես իրենց զավթողական ձգտումները իրագործող ուժի, որի օգնությամբ նրանք ընդլայնում էին պետության սահմանները, հպատակեցնում նորանոր ժողովուրդների։ Նրանք աշխատում էին զինվորական ծառայության հիմնական ուղերվը հանդիսացող թուրք ժողովրդին հեռու պահել տնտեսական գործունեությունից, այն համարելով հպատակ ռայաների պարտականությունը։ Այդ դժվար չէր, քանի որ առաջինները իրենց ապրուստը հայթայթում էին շնորհիվ զինվորական ծառայության և հարստանում էին պատերազմների ու թալանի միջոցով։ Այսպիսին էր իրերի վիճակը Օսմանյան կայսրության մեջ դարեր շարունակ։ Մուսուլման, մասնավորապես, թուրք երիտասարդությունը ձգտում էր ռազմական կամ պետական ծառայության։ Հենց այդ նպատակի համար էլ նա պատրաստվում էր։ Երբ հաղթական արշավների շրջանը անցավ պատմության գիրկը, կայսրությունը անկում էր ապրում, իսկ պատերազմներից ստացվող եկամուտները պակասեցին, պետության ուշադրության առարկա դարձան միջոցներ հայթայթելու նոր ճանապարհներ։ «Հիմնական ուղին, որին դիմեց պետությունը,— գրում է Մ. Սենջերը,— ռայայի վրա դրեց ծախսերը ծածկելու ամբողջ ծանրությունը»[36]։

Հսկայածավալ կայսրության ռազմական ու վարչական ծախսերը հետզհետե ավելանում էին, որովհետև անհրաժեշտ էր ապահովել նրա գոյությունը ավելացվող արտաքին ճնշումների, սեպարատիզմի և հպատակ ժողովուրդների աճող դժգոհության ու ազատագրական պայքարի պայմաններում։ Այս պատճառով էլ, ինչպես նշում է Խալիս Օքանը, «պետության ամբողջ էներգիան ուղղված էր մարտունակ բանակ ստեղծելուն»[37] և մշտապես նրան էր տրամադրվում բյուջեի մեկ երրորդ մասը։ Այսպիսով բանակը, եկամուտների ու հարստության աղբյուրից հետզհետե դառնում է պետական և ժողովրդական միջոցները կլանող, երկիրը ավերող մի կազմակերպություն։ Գեներալ-մայոր Ավերյանովի տվյալներով XX դարի սկզբին կայսրությունը բաժանված էր 491 զումարտակային օկրուգների, որոնցից 322-ը կամ 66%-ը գտնվում էր երկրի ասիական մասում, որը հանդիսանում էր «նրա ռազմական հզորության ծանրության կենտրոնը և միջոցների աղբյուրը»[38]։ Ամեն մի 6.000 քառ. կմ վրա գտնվում էր մեկ զումարտակային օկրուգ, որոշ քանակով աշխարհազորային միավորներ, իսկ արևելյան մասում նաև՝ տխրահռչակ Համիդիեի ստորաբաժանումները։ Եթե ի նկատի առնենք, որ բանակին հատկացված զումարները որպես կանոն յուրացվում էին մեծ ու փոքր հրամանատարների ու շտաբների կողմից, ապա պարզ է, որ նրա մատակարարման ամբողջ ծանրությունը ընկնում էր ժողովրդի վրա և սննդամթերքի, վառելիքի ու այլ պետքերը հոգալու կամայականորեն սահմանած պարտականությունը կատարում էր տեղի ազգաբնակչությունը։ Ա-Դոն, որպես օրինակ, հիշատակում է Բայազետի Դիադան գավառակի Ուշքիլիսե հայաբնակ գյուղը, որտեղ բնակ-

35 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 21, էջ 164։

36 M. Sencer. նշվ. աշխ., էջ 296—297։

37 Х. Окан. նշվ. աշխ., էջ 10։

38 Տե՛ս «Этнографический и политический сборник азиатских владений Оттоманской империи», СПб., 1912, էջ 5։

վում էր 27 բնանիք և նրանք ստիպված էին բավարարելու դյուղում գտնվող «իրենց կայազորի» 20 զինվորականների բոլոր պահանջները[39]։

Հարստանալու մարմաջն ու ձրիակերությունը, որպես ախտ վարակել էին Թուրքիայի ոչ միայն ռազմա-բյուրոկրատական ամբողջ վերնախավին, այլև մեծ ու փոքր բոլոր կեղեքիչներին։ Պաշտոնները դարձել էին առ ու ծախի առարկա, թալանի և կուտակման միջոց։ Անօրինականությունն ու կամայականությունը համակել էին կայսրության բոլոր օրգանները՝ վերից-վար։ Ստեղծված պայմաններում թալանի ենթակա էին ոչ միայն թուրք, այլև Օսմանյան կայսրության դրված բոլոր երկրների, նրա գաղութների ժողովուրդները։ Որպեսզի ընթերցողը մոտավոր պատկերացում ունենա վերջիններից դանձվող տուրքերի և եկամուտների այլ աղբյուրների մասին, նշենք, որ ըստ Թուրքական կառավարության 1876 թ. սալնամեի, կայսրության ուղղակի հպատակների թիվը նրա ասիական, աֆրիկյան ու եվրոպական մասերում կազմում էր 23 միլիոն։ Իսկ եթե հիշյալ թվի վրա ավելացնենք հարկատու երկրների ամբողջ ազգաբնակչությունը, այն հասնում էր 47 միլիոնի[40]։ Իհարկե Թուրքիան ի վիճակի չէր օգտագործելու իր գաղութները եվրոպական երկրների ձևերով ու մեթոդներով։ Դրանք պահպանելու համար նա պարզապես գործադրում էր զինված ուժ, խոշոր զինվորական կայազորներ էր տեղադրել Բալկաններում, Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրներում, Արևմտյան Հայաստանում և այլուր։ Կայազորները ապստամբությունների ու պատերազմների ժամանակ մեծացվում էին զգալի չափերով, ավելացնելով ֆինանսական հատկացումների գումարները։ Այսքանը համարելով անբավարար, սուլթանը և նրա կառավարությունը տեղական առաջնորդներին, ցեղապետներին, շեյխերին և քաղաքական լիդերներին կաշառում էին նվերներով, թոշակներով և այլ ձևերով։ Այս բոլորը ավելի էին ծանրացնում իր անկումն ապրող կայսրության և նրա ժողովուրդների վիճակը։

Երկրի տնտեսական զարգացման մեջ շատ կարևոր դեր է կատարում տվյալ բազիսի ստեղծած վերնաշենքը։ Սուլթանական Թուրքիայում ձևավորված և դարերով ամրապնդված պետական կարգը իր բոլոր կողմերով հազիվ թե կարողանար այդ իմաստով դրական դեր կատարել։ «Տնտեսական շարժումը,— գրել է Ֆ. Էնգելսը,— ընդհանուր առմամբ իր համար ճանապարհ կբացի։ Սակայն նա իր վրա կզգա իր իսկ ստեղծած և հարաբերականորեն ինքնուրույն քաղաքական շարժման հակառակ ներգործությունը։ Տնտեսական շարժման վրա ազդում են մի կողմից պետական իշխանության շարժումը, իսկ մյուս կողմից՝ վերջինիս հետ ձևավորված օպոզիցիան»[41]։ Ֆ. Էնգելսը ցույց է տալիս, որ այդ ներգործությունը կարող է լինել դրական կամ բացասական, այսինքն կարող է նաև խանգարել, դանդաղեցնել տնտեսական շարժումը։ Հենց այդպիսին էլ եղել է օսմանյան պետության ազդեցությունը կայսրության և նրանում բնակվող ժողովուրդների տնտեսական զարգացման վրա։ Ակադեմիկոս Իվան Սենգարովի կարծիքով՝ թուրքական տիրապետությունը այդ ժողովուրդների համար «սկզբից մինչև վերջ եղել է մի սարսա-

---

39 Ա. Դ ո, Հուշեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդությունից. «Նոր հոսանք», 1913, № 45, էջ 794։

40 «Բագմավեպ», 1877, ԼՆ (35), էջ 192։

41 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 37. էջ 417։

փելի տնտեսական, քաղաքական և հոգևոր ճնշում Թուրքական սուլթանների և նրանց ծառաները հանդիսացող ֆեոդալների կողմից, ինչպես նաև մի իսկական «սև ստրկություն», որը կասեցրել էր բուլղարների, սերբերի, հույների (պետք է ավելացնել և մյուսների—Հ. Ի.) ու ալբանացիների կուլտուրական զարգացումը»[42]։ Հիշյալ դրույթը ապացուցող փաստերը բազմաթիվ են և բազմապիսի։ Օրենքների, կարգի, իշխանության հեղինակության բացակայությունը, պետական օրգանների հանցավոր անտարբերությունը, կամ ավելի ճիշտ օգնությունը կատարվող կամայականությունների ընթացքում, կաշառակերությունը և անպատիժ մնալը՝ այս և ուրիշ հանցանքների համար պետական պաշտոնյաներին և բոլոր փոքր ու մեծ իշխանություն ունեցողներին դարձրել էին անսանձ, անզուսպ ու ինքնիշխան։ Կատարվող անօրինականությունների, կողոպուտների ու թալանի դեմ կառավարությունը չէր էլ ցանկանում պայքարել, ինչպես գրում է ականատեսը, «վախենալով ոչ ժողովրդական երևալ»[43] կամ կորցնել իր համբավը տիրող խավերի լայն շրջաններում։ Դեռ ավելին, սուլթանը և իր համախոհները աշխատում էին ամենահայտնի ավազակին, մեծահարուստ ցեղապետներին, ռազմական ու պետական պաշտոնյաներին նվերներով, եկամտաբեր պաշտոններ տալով կամ ուղղակի կաշառելով սիրաշահել ու ապահովել նրա շքեղ ու շռայլ կյանքը։ Այս նպատակին էին ծառայում անգործունյա պետական խորհրդի անդամների աճը, որոնց թիվը Աբդուլ Համիդը 30-ից հասցրեց 300-ի, իսկ ոստիկանական խորհրդի անդամների թիվը ավելացրեց համապատասխանորեն 20-ից 150-ի և այլն[44]։

Ռուս հայտնի գիտնական և ճանապարհորդ Պ. Ա. Չիխաչովը, որը մոտ 20 տարի ուսումնասիրել է Թուրքիան, եղել է նրա ամենահեռավոր անկյուններում, գրում է, որ իր շռայլությամբ ու անհաշիվ ծախսերով Օսմանյան կայսրության աստիճանավորները անցել են բոլոր սահմանները։ Նա արձանագրում է, որ դեռևս 1860-ական թթ. սուլթանը իր անձնական պետքերի համար ծախսում էր կայսրության եկամուտների մեկ յոթերորդ մասը։ Մինչդեռ Թուրքիայից ավելի հարուստ երկրների ղեկավարները զգալիորեն քիչ էին շռայլում՝ Ռուսաստանի միապետը յուրացնում էր եկամուտների 1/20-ը, Ավստրիայինը՝ 1/30-ը, Ֆրանսիայինը՝ համարյա 1/50-ը, Անգլիայինը՝ 1/200-ը և այլն[45]։ Սուլթանի օրինակին էին հետևում մյուս պալատականները, ավագանին, պետական ծառայողները, զինվորականները, հարկահավաքները և բոլոր նրանք, ով կարող էր կողոպտել ու թալանել, օգտագործելով իրենց պաշտոնն ու դիրքը, ուժի իրավունքը։

Աբդուլ Համիդի շրջանը ներկայացնող Թուրք պատմաբան Օսման Նուրին այս ամենը ամփոփել է հետևյալ տողերում. «Ազգը ուժասպառ էր եղել դեսպոտիզմի ճանկերի մեջ՝ դաժանությունից, անիրավությունից ու զուլումից։ Պետական բոլոր հիմնարկությունների գործունեության առանցքը կազմում էին գանձագողությունը, բռնությունը և դաժանությունը... Բանակում ևս,

---

42 Н Снегаров, Турското владичество пречка за културното развитие на Българския народ и другите Балкански народи, София, 1958, էջ 195։

43 «Вестник Европы», 1903. кн. 4, էջ 694։

44 Տե՛ս «Երկրի ձայնը», 1906, № 5, էջ 8։

45 Տե՛ս П. А. Чихачев, Великие державы и Восточный вопрос, М., 1970, էջ 191։

սոլանների շրջանում և այլ պաշտոններում իրավունքին և արդարությանը հասնում էին կամ կաշառքով կամ բարձր հովանավորության միջոցով»[46]։ Այս ամենը համարվում էր սովորական ու բնական երևույթ և նրանց վերացման կամ նրանց դեմ պայքարի որևէ փորձ անգամ չէր կատարվում։ Այդ երևույթների բնականոն լինելու հոգեբանությունը տիրում էր կառավարական օրգանների բոլոր օղակներում՝ վերևից մինչև ներքև։ Ռուսական ռազմական գործակալ գնդապետ Պաշկովը մի հաղորդագրությունում մեջ է բերում Աբդուլ Համիդի խոստովանությունը։ Մինչև ուղն ու ծուծը ապականված բռնակալը խոստովանում է իր մերձավորներից մեկին. «Ես գիտեմ, որ ինձ շրջապատողները բոլորը թալանում են և կուտակում հսկայական հարստություններ՝ հարկերով ու կաշառքով, բայց Թուրքիայում չկան այնպիսի մարդիկ, որոնք չեն թալանելու, եթե իրադրությունը նրանց թույլատրում է...»։ Արդեն հարստացած թալանչիները և ավազակաբարո պաշտոնյաները, շարունակում է սուլթանը, «ինձ հավատարիմ են, մինչդեռ ես չեմ կարող հենվել նորերի հավատարմության վրա, որոնք կորցնելու ոչինչ չունեն»[47]։ Պարզ է, որ այս «փիլիսոփայությամբ» համակված ղեկավարները կամ պետական ապարատը հին, նեխած փոխհարաբերությունների կողմնակիցներ էին և հասարակության նոր ուժերի ամրապնդման հակառակորդներ։ Մինչդեռ ամեն մի նոր ձեռնարկության համար անհրաժեշտ էր բարձր պաշտոնյայի կամ օրգանի կողմից տրված իրավունք կամ թույլտվություն։ Սակայն ոչ թե արտադրության հոգսն էր առաջնորդում այդպիսի գործում, այլ հարստանալու տենչը. «Բավական է, որ թուրքը կամ թուրքահպատակ անձնավորությունը,— գրում է Ի. Գոլոբորոդկոն,— հիմնադրի որևէ ձեռնարկություն, որպեսզի բոլորը մեկը մյուսի հետևից... սկսեն զանազան դրամական շնորհներ կորզել»[48]։ Նոր ձեռնարկությունը ստեղծելու կամ պահպանելու համար երբեմն պահանջվում էին անմարդկային չանքեր, քանի որ հաճախ սուլթանը կամ նրա անունից որևէ բարձրաստիճան անձնավորություն արգելում էր թուրքերի մասնակցությունը ֆինանսական կամ արդյունաբերական գործարքներին։

«Թուրքական արդյունաբերության ժամանակակից անկումը,— գրել է Պ. Ա. Չիխաչևը 1858 թ.,— բացատրվում է ոչ երբեք ազգաբնակչության ընդունակությունների բացակայությամբ, այլ, ավելի շուտ, կառավարության անփութությամբ, կառավարություն, որը չկարողացավ խթանել աշխատանքը արդյունաբերության մեջ կամ թեկուզ հեռացնել նրա զարգացման ճամփին եղած արգելքները»[49]։

Ինչպես տեսնում ենք, տեղի էին ունենում կապիտալիստական հարաբերությունների զարգացումն արգելակող ուղղակի բայլեր, փորձեր, որոնք չափազանց բացասական դեր էին խաղում կայսրության տնտեսական և քաղաքական առաջընթացի մեջ։ Իզուր չէ, որ Ֆ. Էնգելսը առաջին պլանի վրա է դնում Թուրքիայի պայմանները, երբ գրում է, որ «թուրքական, ինչպես նաև որևէ այլ արևելյան տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակարգի հետ»[50]։

---

46 O. Nuri, Abdul Hamid sani ve devri saltanati, birinci baski. Ist., 1911, էջ 1136։
47 АВПР, ф. «Секретный архив», д. 178, թ. 29։
48 И. И. Голобородько. Турция. М., 1912, էջ 146.
49 П. А. Чихачев. Նշվ. աշխ., էջ 104։
50 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 22, էջ 33։

Երկրի արտադրողական ուժերը, ի թիվս դրանց նաև արդյունաբերության բոլոր բնագավառները պետության ղեկավարների կողմից դիտվում էին լոկ որպես անձնական հարստացման միջոց և ուրիշ ոչինչ։ Հաճախ հնարավոր չէր լինում որևէ պաշտոնական օրգանից կամ անձնավորությունից հետո դիմել մեկ ուրիշին, որովհետև այդ ուրիշը, վերցնելով իրեն հասանելիք կաշառքը, վախենում էր օգնել խնդրի իրագործմանը և դրա շնորհիվ դառնալ այս կամ այն փաշայի, սուլթանի մերձավորների թշնամին։ Դա չափազանց տարածված երևույթ էր, քանի որ հիշյալ անձնավորությունների ձեռքերում էր գտնվում բազմաթիվ բնագավառների ղեկավարությունը։ Այսպես, օրինակ, Աբդուլ Համիդը իր սիրելիներից մեկին՝ Զեքի փաշային դարձրել էր այսպես կոչված թոփհանեի և գազհանեի պետ, վառոդ ու փամփուշտ արտադրող գործարանների, ձուլարանի, պետական կաշեգործարանի ղեկավար և ռազմական բոլոր դպրոցների ընդհանուր պետ։ Եվ Զեքի փաշան բազմաթիվ թելերով կապված էր արդյունաբերողների, օտար ընկերությունների, տնտեսությունը ղեկավարող մի շարք պետական կազմակերպությունների հետ։ Ահա այս պատճառով ամեն մի փոքր ու մեծ պաշտոնյայի համար շատ վտանգավոր էր նրան շրջանցելը։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման ընթացքում այս բնորոշ երևույթը Արևելքի շատ երկրների և Թուրքիայի համար ուներ իր մյուս երեսը։ Նման միջոցներով հարստացած ռազմա-բյուրոկրատական պետության ներկայացուցիչները, որպես կանոն աշխատում էին իրենց կուտակածը օգտագործել նոր հողային տարածություններ ձեռք բերելու համար և ապա որպես հողատեր մասնակցել սպեկուլյատիվ գործարքների, առևտրի կամ նույնիսկ արդյունաբերության մեջ։ Այս երկար ճանապարհը անասելի կերպով դանդաղեցնում էր կապիտալի շրջանառությունը, հաճախ դարձնում էր նրան անշարժ գույք, գանձ կամ հարստության այլ ձև։ Ֆեոդալական պետության մեջ, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր, և՛ տնտեսական, և՛ քաղաքական ու հոգեբանական իմաստով հասկանալի ու բացատրելի էր այս ամենը, որոնք, սակայն, չէին խթանում զարգացման պրոցեսը։ Իրերի վիճակը այնպիսին էր, որ հողագործության մեջ դրված կապիտալը տալիս էր ընդամենը 4%-ի եկամուտ, մինչդեռ տնտեսության մյուս բնագավառներում այն հասնում էր մինչև 10%-ի[51]։

Սուլթանական միահեծան իշխանությանը փոխարինած Երիտթուրքերի ղեկավարությունը չփոխեց իրավիճակը։ Պետական ապարատը, ամբողջ չինովնիկությունը և զինվորականությունը շարունակում էին ծծել երկրի հյութը, խանգարել նրա զարգացումը։ Լինելով լիբերալ-հողատերերի և բուրժուական վերնախավի շահերի ներկայացուցիչները, երիտթուրքերը չունեին տնտեսական զարգացման և հասարակական հարաբերությունների վերափոխման իրենց որոշակի ծրագիրը։ Նրանց ղեկավարներն ու տեսաբանները, պետական ու կուսակցական գործիչները քիչ թե շատ հետևողականորեն ձգտում էին գրեթե միայն տնտեսական անկախության, իմպերիալիստական երկրների ճնշող ազդեցության թուլացման։ Բայց նրանք այդպես էլ ի վիճակի չեղան

51 Տե՛ս Ն. Տաղավարյան, Երկրագործության, անտառաց և հանքաց զարգացումն ու շահագործումն, Կ. Պոլիս, 1909, էջ 13։

կամ չցանկացան մշակել այդ նպատակին հասնելու ձևերն ու մեթոդները։ Մի շարք աղբյուրներ նշում են, որ անօրինականությունը և կամայականությունը շարունակվում էին նույն թափով։ Միայն հին կաշառակերների մի մասը փոխարինվեց նորերով, երիտթուրքերի ղեկավարները օգտագործեցին հարստացման նույն ուղիները և դարձան հողատերեր և ձեռնարկատերեր։

Երիտթուրքական հեղափոխությունը շատ քիչ բան արեց ֆեոդալական կարգերը թուլացնելու (չասենք ոչնչացնելու) և բուրժուական հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ։ 1913 թ. արդյունաբերության զարգացման վերաբերյալ ընդունված ընդհանուր օրենքը, մյուսների նման, բոլորովին էլ չլավացրեց տնտեսության այդ ճյուղի վիճակը, իսկ երկրորդական դիրքեր գրավող թուրք բուրժուազիան չկարողացավ կառավարության գործունեության վրա ազդելու համար ցուցաբերել որևէ ակտիվություն։

Կապիտալիստական գործունեության միակ բնագավառը, որին ձգտում էին երիտթուրքերի ղեկավարները, «գլխավորապես շահավետ կոմպրադորային առևտուրն էր»[52]։

Օսմանյան կայսրությունում տիրող պետական կարգը այնպիսին էր, որ սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարեփոխումներ կարող էին առաջարկել ու իրագործել միայն թուրք ժողովրդի մտավորականության և պետական ու ռազմական գործիչների լավագույն ներկայացուցիչները, որոնք, սակայն, ի վիճակի չէին մինչև վերջ հասցնել իրենց սեփական ծրագիրն ու առաջարկությունները։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման որոշ աստիճանում իրապես եղան ռեֆորմներ անցկացնելու փորձեր, որոնք ի վերջո, այսպես կոչված Թանզիմաթի շրջանում, հանգեցին վարչական որոշ բարեփոխումների, չշոշափելով անգամ հասարակական հարաբերությունների բնագավառը։ Այնուհետև մշակվեց և սահմանադրական շարժման ընթացքում հաստատվեց քաղաքացիական օրենսդրություն, հրապարակվեցին առանձին օրենքներ, որոնք ուղղված էին սեփականության իրավունքի ընդլայնմանը և ամրապնդմանը։ Սակայն այդ ամենը մեծ մասամբ մնում էր թղթի վրա, հրապարակվում էր կենտրոնում, գավառները հաճախ անտեղյակ էին մնում անց ու դարձին։ Ահա թե ինչու Պ. Ա. Չիխաչովը ռեֆորմների փորձերը լուրջ չի համարում և գտնում է, որ տրված հանդիսավոր խոստումներին չհետևեցին գործնական միջոցառումներ, որ «թուրքական կառավարությունը քաղաքակրթության և սոցիալական կառուցվածքի մեծ հարցերի լուծման ճանապարհին չկատարեց ոչ մի քայլ...»[53]։ Խնդիրը նրանում էր, որ թուրք ռեֆորմատորների միակ նպատակը կայսրության վիճակի բարելավումն էր։ Չունենալով լայն դասակարգային բազա և սերված լինելով ավատական կամ ռազմաբյուրոկրատական խավերից, նրանք չէին արտահայտում երկրի առաջընթացի իսկական շահերը։ «Թուրքիայում բարեփոխումների գլխավոր, եթե ոչ միակ դրդապատճառը,— գրում է Ա. Ֆ. Միլլերը,— տիրող դասակարգի առաջավոր փոքրիկ մի խմբի ձգտումն էր՝ այդ բարեփոխումների միջոցով փրկել կայսրությունը վերահաս անկումից»[54]։ Հանուն այդ նպատակի պայքարում էին և՛ «երիտասարդ օսմանները», և՛ երիտասարդ թուրքերը, և՛ այլ բուրժուական

52 Տե՛ս «Всемирная история», т. VII, М., 1960, էջ 375։
53 П. А. Чихачев, նշվ. աշխ., էջ 12։
54 А. Ф. Миллер, Мустафа-паша Байрактар, М.—Л., 1947, էջ 73։

կամ կիսաբուրժուական կազմակերպություններ՝ մինչև բնմալական շարժումը։ Այս ճշմարտությունը չէին թաքցնում իրենց ելույթներում և փաստաթղթերում երիտթուրքերը, որոնք հեղափոխության նախօրեին հայտարարեցին մամուլում. «...Մենք շարունակում ենք մնալ սահմանադրական միապետության և Օսմանի հարստության պահպանման կողմնակիցներ»։ Մեր գործունեությունը «չի նպատակադրել փոփոխելու երկրի կրոնական և հասարակական հաստատությունները»[55]։ Բնականաբար նման պետական կարգը, միանգամայն օրյեկտիվորեն, հանդիսանում էր երկրի զարգացումն արգելակող լուրջ գործոններից մեկը։

Մեկ հոդվածի սահմաններում դժվար է խրթին և լուրջ հարցը լուսաբանել մանրամասնորեն, ընդգրկելով նրա բոլոր կողմերը։ Ուստի անհրաժեշտ ենք համարում թռուցիկ կերպով կանգ առնել կայսրության ներքին քաղաքականության երկու կարևոր հարցերի վրա և ներկայացնել մեր կարծիքը արտաքին գործոնի խաղացած դերի մասին։

Օսմանյան կայսրության ամբողջ պատմության ընթացքում առանձին մարդկանց, ընտանիքների և ժողովուրդների համար վճռական նշանակություն է ունեցել մահմեդական կամ ոչ մահմեդական լինելու խնդիրը։ Առաջինը օգտվել է բոլոր իրավունքներից և համարվել է իշխող քաղաքական ուժ։ Երկրորդը՝ ստիպված է եղել ենթարկվել նրան, հաճախ կատարել նրա կամքը, անօրինական պահանջը, եթե նույնիսկ դրանք ներկայացնում էին հասարակական դիրքով և ունեցվածքով ավելի ցածր գտնվող անհատի կամ խմբի կողմից։ Թուրքը, «ինչպիսի սոցիալական դրության էլ որ պատկանի,— գրել է Կ. Մարքսը,— նա արտոնյալ կրոնի և ազգի ներկայացուցիչն է, միայն նա ունի իրավունք դենք կրելու և ամենաարձրատիճան քրիստոնյան պարտավոր է հանդիպելիս ճանապարհը զիջել մահմեդականին, որը կարող էր լինել հասարակության ցածր խավի ներկայացուցիչ»[56]։ Սա բմահաճույքի հետևանք չէր, այլ դարերով սահմանված օրենք, անխախտելի սովորություն և ընկած էր հասարակական հարաբերությունների հիմքում։ Պետության բաղաքականության մեկնակետը, վարչական ու դատական օրգանների գործունեության, ինչպես նաև օրենսդրության հիմքը հանդիսացող կրոնը, նրա դոգմաները «հավատացյալների» և «անհավատների» մեջ մտցրել էին անհավասարության սկզբունքը և այն խախտելը նշանակում էր «իսլամի հավատամքի խորհրդանիշի հիմնական կանոնի խախտում»[57]։ Այդ դրությունը չէին կարող շրջանցել նույնիսկ սուլթանները, որոնցից 23-ը միաժամանակ եղել են և կրոնապետ-խալիֆաներ։ Հակասությունները ու թշնամանքը միշտ բաժանել են սուլթանի հպատակներին և ծառայել հսկայական կայսրության ժողովուրդներին իրավազուրկ վիճակում պահելու նպատակին։ Ըստ մահմեդական օրենսդրության, նշում է ֆրանսիացի արևելագետ Պ. Ժանտիզոնը, ոչ մահմեդականները «երբեք չեն կարող դառնալ բաղաքացիներ այդ բառի բուն իմաստով։ Նրանք կմնան ստրուկներ (notes)»[58]։

---

55 «Երկրի ձայնը», 1908, № 1, էջ 5։
56 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 9, էջ 6։
57 М. Маккоэль. Султан и державы. СПб., 1897, էջ 156։
58 P. Gentison. Mustapha Kemal ou L'Orient en marche. Paris, 1929, էջ 23։

Հանուն իրավահավասարության երկրի ներսում տարվող պայքարը որևէ դրական արդյունք չտվեց։ Անշուշտ, այլազգի կամ ոչ մահմեդական որոշ անհատներ հաճախ օգտագործվում էին պատասխանատու պաշտոններում։ Քիչ չեն եղել քրիստոնյա մինիստրներ, վարչական բարձր պաշտոնյաներ, հարկահավաքներ, մտավորականներ, որոնք ծառայել են Օսմանյան կայսրության շահերին։ Սակայն դա չի փոխել իրերի վիճակը։

Վերլուծելով նշված փոխհարաբերությունները, Կ. Մարքսը ընդգծել է, որ օրենքի առջև տարբեր կրոնների ներկայացուցիչներին հավասար ճանաչելու խնդիրը Օսմանյան կայսրության պայմաններում անիրագործելի էր, որովհետև այն կնշանակեր իրականության մեջ «փոխարինել Ղուրանը նոր բաղաքացիական օրենսդրությամբ, այլ խոսքով կնշանակեր խորտակել Թուրքական հասարակության կառուցվածքը և նրա փլատակների վրա ստեղծել նոր իրադրություն»[59]։

Քննարկվող խնդրի բոլոր ուսումնասիրողները ցույց են տալիս, որ կրոնական արգելքը անկարող էին հաղթահարել նույնիսկ Թուրք ամենաառաջավոր գործիչներն ու մտածողները։

Նույնպիսի բարդ և դժվար լուծելի էր ազգային հարցը։ Այն միշտ եղել է ներքին բաղաքականության ամենացավոտ հարցերից մեկը՝ Թուրքիայի տիրող շրջանների շովինիստական աշխարհայացքի անդիջում կերպով կիրառելու հետևանքով։ Բանն այն է, որ արհեստների և արդյունաբերության (որոնք կենտրոնացված էին գլխավորապես ոչ Թուրք տարրերի ձեռքին) զարգացմանը համընթաց ուժեղացել է ազգային ճնշումը։ Թուրքական վերնախավը այս ձևով արտահայտում էր իր անհանգստությունը հպատակ ժողովուրդների տնտեսական առաջադիմության առթիվ։ Չկարողանալով հենվել տնտեսական գործոնների վրա, որպեսզի արդելակեր վերջիններիս համեմատաբար արագ զարգացումը, նա օգտագործում է «քաղաքացիական և ռազմական պաշտոններում ունեցած իր մոնոպոլիան»[60]։ Բացի վերոհիշյալ պատճառից ազգային ճնշման վերջնական նպատակը, ըստ Թուրք նշանավոր պետական գործիչների ու մտավորականների կարծիքի (մեծ վեզիրներ Ֆաուդ փաշա, Միդհատ փաշա, Քյամիլ փաշա, նաև երիտԹուրքերի ղեկավարները և Թուրքականության բոլոր գաղափարախոսները) և պատմական փաստերի՝ այլ ժողովուրդների բռնի ձուլումն էր, նրանց «օսմանցի» դարձնելը և մահմեդականացնելը։

Վ. Ի. Լենինը ընդգծում է, որ ֆեոդալական ու միապետական կարգերի առկայությունը, ազգությունների ճնշումը «խիստ կասեցնում են հասարակական զարգացումը և պրոլետարիատի աճումը»[61]։ Օսմանյան կայսրությունում այդ հանգամանքը ուներ հատուկ նշանակություն, քանի որ, ինչպես նշեցինք, նոր, կապիտալիստական հարաբերությունների կրողը, առաջընթացի շարժիչ ուժերը հանդիսանում էին հենց քրիստոնյա ժողովուրդները, հրեաները, տեղայնացված եվրոպացիները։ Նրանք անցյալ դարի կեսերին արդեն մտել էին ազգերի ձևավորման փուլը, ունեին ազգային մշակույթ, կազմակերպություն-

59 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Сочинения, т. 10, էջ 169։

60 Նույն տեղում, հատ. 9, էջ 25։

61 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 467։

ներ, որոնք առաջադրում էին ազգային խնդիրներ։ Մինչդեռ թուրքերը և մյուս մահմեդական ժողովուրդները նոր էին թևակոխում կապիտալիստական զարգացման շրջանը, իսկ տիրապետող ժողովրդի ղեկավարները մտածում էին բարեփոխումների միջոցով սոսկ ամրապնդել օսմանյան ֆեոդալական պետությունը։ Ազգային խտրականությունը միայն իրավական ու քաղաքական երանգ չուներ։ Նա չափազանց զգալի էր տնտեսական բնագավառում։ Այսպես, հատուկ քաղաքականություն էր տարվում սեղմելու, փոքրացնելու քրիստոնյա հողատերերի վարելահողը, այգին, կամ քրիստոնյա համայնքների ընդհանուր օգտագործման հողային տարածությունները։ Օրինակ, Արևմտյան Հայաստանում և այլուր, ինչպես վկայում է Ա. Մ. Կոլյուբակինը, մահմեդականները «տասն անգամ ավելի վարելահող ունեին, քան հայերը»[62]։ Հաշվումները ցույց են տալիս, որ միջին հաշվով մահմեդականների հողակտորները 6,5 անգամ ավելի էին քրիստոնյաների հողերից։ Զանազան տեսակի հարկերն ու տուրքերը վերջինները միշտ ավելի շատ էին մուծում, քան առաջինները, չհաշված տխրահռչակ զինվորական տուրքը և զանազան պաշտոնյաներին, զինվորականներին ու հոգևորականներին «հյուրասիրելու» (ըստ շարիաթի՝ 3 օր, իրականում՝ շատ ավելի) ավերիչ պարտականությունը, որ դրված էր ռայաների վրա։

Ամենուր կամայականությունների առաջին զոհն էր դառնում ոչ մահմեդական գյուղացին ու քաղաքացին։ Հետևանքը եղավ այն, նշում է Ռ. Լյուքսեմբուրգը, որ ձևավորվեց վերջիններիս բնական ձգտումը «պոկվել ամբողջությունից և անկախ գոյությամբ բնաղդաբար որոնել սոցիալական ավելի բարձր զարգացման ուղի»[63]։

Ուրեմն ճնշված ժողովուրդների ազգային շարժման ծավալումը օբյեկտիվորեն դառնում էր հանուն տնտեսական զարգացման, քաղաքակրթության տարածման անհրաժեշտության մղվող պայքարի ուղղակի արտահայտությունը։ Այդ հասկացողությունները հետզհետե դառնում են նույնական և նրանց իրագործման հետ կապված խնդիրները՝ հրատապ ու կենսական։ Սոցիալական իմաստով ազգային պայքարը առաջավոր, կապիտալիստական ուժերի բախման արտահայտությունն էր ֆեոդալական, հետադիմական ուժերի հետ, քանի որ թե՛ Աբդուլ Համիդի շրջանի պանիսլամիզմն ու օսմանիզմը, թե՛ երիտթուրքերի պանթուրքիզմն ու պանթուրանիզմը փաստորեն հանդիսանում էին ֆեոդալական դաղափարախոսության ու քաղաքականության ձևերը։ Ավանտյուրիստական ու շովինիստական հիշյալ պլանների կենսագործման փորձերից մեկի՝ արևմտահայության ցեղասպանության հետևանքով երկրին հասցվեց, անկասկած, զգալի տնտեսական վնաս։ Միայն հայերից թալանած անշարժ ու շարժական գույքերի, կոտակված հարստությունների և այլ ասպարեզներում հասցված վնասները հավասարվեցին հինգ միլիարդ ոսկի դոլլարի, չհաշված ապահովագրված և տարբեր բանկերում ու կազմակերպություններում գտնված գումարները, որոնք յուրացվեցին հետագայում[64]։

---

62 А. М. Колюбакин. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. I, ч. I. Тифлис, 1888, էջ 380։

63 Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 142։

64 Տե՛ս Հ. Գ. Ղազարյան, Ցեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968, էջ 239, 421։

Դ. Ավչիօղլուն արձանագրում է, որ «1914—1918 թվականներին և ազատագրական պատերազմի տարիներին արտաքսված և փախած հայերի և հույների խանութները, վարելահողերը, այգիները, բանջարանոցները և այլ անշարժ գույքերը թալանվեցին ուժեղ մարդկանց կողմից»[65]։ Գրականության մեջ հաստատվում է այն փաստը, որ երկրի գավառների առևտրի մոտ 80%-ը գտնվում էր քրիստոնյաների ձեռքին։ Իսկ բազմաթիվ օրինակներից մեկը ցույց է տալիս, որ ունեզրկված մի մեծ առևտրական տուն Ստամբուլում, պատերազմի նախօրեին Անատոլիայի 42 քաղաքներում գտնված 378 առևտրականների բաց էր թողել վարկով ապրանքներ, որոնց արժեքը հավասար էր 13922 թուրքական լիրայի[66]։ Այդ բոլորը յուրացվեց անվերադարձ կերպով։

Որպեսզի ավելի պարզ լինի նման քաղաքականության հասցրած տնտեսական վնասը, նշենք, որ պաշտոնական աղբյուրների տվյալների համաձայն կայսրության էկոնոմիկայում, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, տեղական բուրժուազիայի տարբեր խմբերի մեջ դերերը բաժանվում էին հետևյալ կերպ. հունական կապիտալը հսկում էր արտադրության և առևտրի մոտ 50%-ը և ֆինանսական ներքին գործարքների 40%-ը, հայ ձեռնարկատերերը, առևտրականները և ֆինանսիստները՝ մոտ 24%-ը։ Հրեա բուրժուազիան և տեղայնացված եվրոպացիները զբաղվում էին երրորդ տեղը, իսկ թուրքական ազգային բուրժուազիան՝ չորրորդ տեղը։ Ըստ գրականության տվյալների վերջինս հսկում էր առևտրի 15%-ը և արտադրության 12%-ը[67]։ Անասունների առևտրով զբաղվողների 80%-ը թուրքեր էին, որոնց պատկանում էր նաև գորգերի վաճառքի 40%-ը։

Հետզհետե աճող թուրք բուրժուազիան, լինելով թույլ կազմակերպված և անկարող տնտեսական միջոցներով մրցելու այլազգի բուրժուազիայի հետ, օգնում էր ֆեոդալական պետական ապարատին՝ բռնի ուժի միջոցով ոչնչացնելու իր հակառակորդներին և ազատելու ազգային շուկան և ընդհանրապես ասպարեզը, ճանապարհ հարթելու իր զարգացման համար։ Զարգացած կապիտալիստական երկրների համար այս ոչ բնականոն ուղին, սովորական էր Արևելքի շատ երկրների և մասնավորապես Թուրքիայի համար։ Հենց այդ ուղին էլ հանդիսացել է տնտեսական հետամնացության ներքին կարևոր պատճառներից մեկը։

Անշուշտ արգելակող դեր է կատարել նաև օտար կապիտալը, Արևմուտքի առաջավոր երկրների գաղութային քաղաքականությունը, Թուրքիայի կիսագաղութային վիճակը։ Բայց երկրի կիսագաղութ դառնալու պրոցեսը, լինելով հար և նման մյուս երկրների նույն պրոցեսներին, ունի իր շատ կարևոր պատմական առանձնահատկություններ։ Հասկանալի է, որ խոշոր պետությունները իրենց գաղութային քաղաքականությունը վարել են հենվելով գլխավորապես զինված ուժերի վրա։ Սինչդեռ օտար կապիտալը Օսմանյան կայսրությունը նվաճեց համեմատաբար ավելի «խաղաղ» ճանապարհով։

---

[65] D. Avcioğlu, Türkiye'nin düzeni, էջ 123։

[66] «Հայաստանն ըստ Թորնպախի 1919-ի տեսության», Կ. Պոլիս, 1919, էջ 28, 31։

[67] Տե՛ս Annuaire Oriental. Commerce, Industrie, Administration, Magistratur de l'Empire Ottoman. Adopte par les Administrations de l'Etat. Patronne par les Chambres de Commerce, 1912, Constantinople.

Սկզբնական շրջանում կապիտուլյացիաները, որպես արտոնագրեր հեշտացրին եվրոպական առևտրականների մուտքը երկիր։ Այնուհետև կապիտուլյացիոն իրավունքը եվրոպական պետությունների ձեռքին դարձավ նրանց ուժն ու արտոնությունները հաստատող փաստաթուղթ։ Քայլ առ քայլ XIX դարի երկրորդ կեսի ընթացքում ֆինանսական և կոնցեսիոն պայմանագրերը մեկը մյուսի հետևից ամրապնդեցին օտար կապիտալի դիրքերը և ուժեղացրին արտաքին ազդեցությունը, իսկ հանրային պարտքի վարչությունը դարձավ տեղական իշխանություններից անկախ, պետություն պետության մեջ։ Թուրքիան վերածվեց իմպերիալիզմի կիսագաղութի։ Երկրի տնտեսական զարգացումը կասեցվեց, և 1830—1850 թթ. տեղական արտադրությունը կրճատվեց մինչև 10 անգամ։ Դաղութային քաղաքականության բացասական հետևանքները ընդհանուր են բոլոր երկրների համար։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ կայսրության «խաղաղ» նվաճման մեջ մեծ դեր է խաղացել ռազմա-ֆեոդալական վերնախավը։ Թուրք առաջավոր մտավորական և պատմաբան Ահմեդ Միդհատը իր «Հեղափոխության հիմունքները» եռահատոր աշխատության մեջ բերում է տասնյակ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես ամեն մի գործարք կնքելիս սուլթան Աբդուլ Ազիզը և ուրիշներ օտարերկրացիներից վերցնում էին մեծ գումարներ ու նվերներ։ Հեղինակը ընդգծում է, որ նման գործարքներ նրանք փնտրում էին[68]։

Իսկ ժամանակակից թուրք հեղինակը ամփոփում է. «Զևավորվեցին խավեր, որոնք մշտական օգուտներ ունեին ֆինանսական քաղցից, Օսմանյան կայսրության կիսագաղութային վիճակից։ Նրանք իրենց օգուտը տեսնում էին աբդուլհամիդյան ռեժիմի պահպանման մեջ»[69]։

Աբդուլ Համիդի և նրա համախոհների աջակցությամբ Թուրքիան դարձավ լրիվ կիսագաղութ՝ հասարակական պարտքի վարչության և մի շարք օտար բանկերի հսկողության տակ։ Բայց եթե Աբդուլ Համիդը իր 30-ամյա թագավորության տարիներին երկրի պարտքը ավելացրեց 13,8 մլն լիրայով, երիտթուրքերը նույնքան գումար ստացան Եվրոպական երկրներից 2 տարվա ընթացքում[70] և 1910 թ. կրկնապատկեցին հասարակական պարտքի գումարը[71]։ Այսպիսին են փաստերը։ Նրանք հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Թուրքիայի կիսագաղութ դառնալը, անկասկած, ծանրացրեց երկրի և նրանում բնակվող ժողովուրդների վիճակը։ Ստեղծվեց երկու ռեակցիոն ուժերի՝ ռազմա-ֆեոդալական պետության և իմպերիալիստական երկրների միություն, որը խիստ կերպով արգելակեց Օսմանյան կայսրության տնտեսական զարգացումը։ Եվ չնայած այն բանին, որ բոլոր ժողովուրդների վերնախավը շահում էր եվրոպական կապիտալից և առևտրից, իսկ կոմպրադորները իրենց գործունեությունը ընդլայնելու մեծ հնարավորություններ ստացան, ժողովուրդները, երկրի աշխատավորությունը, ազգային բուրժուազիան և մանր բուրժուական խավերը, մասնավորապես քրիստոնյաները, դարձան հիշյալ միու-

---

68 ЦГВИА. ф. 401, 1886, д. 10, л. 50։

69 F. H. Tökin. Türkiye'de siyasi partiler ve siyasi düşüncenin gelişmesi, 1893—1965, Ist., 1965. էջ 30։

70 ЦГАВМФ. ф. 898, оп. 1, д. 34, л. 17։

71 Տե՛ս «Вестник финансов, промышленности и торговли», СПб., 1911, № 12, էջ 541։

թյան զոհերը, բայքայվեցին տնտեսապես, ոչնչացվեցին հաճախ նաև ֆիզիկապես։

Ամփոփելով ասածը, անհրաժեշտ է ընդգծել, որ չնայած թուրք բուրժուական հեղինակների մի շարք փորձերին՝ Թուրքիայի տնտեսության հետամնացությունը բացատրել միայն արտաքին հանգամանքներով, դրա հիմնական պատճառները երկրի հույլ զարգացման օբյեկտիվ-պատմական, տնտեսական ու քաղաքական գործոնները՝ ներքին բնույթի գործոններն են, նրա պետական, քաղաքական ու հասարակական կարգը։ Արտաքին ազդեցությունները որոշիչ չէին, երկրորդական նշանակություն ունեին, թեև նրանք իրենց բացասական դերը կատարեցին կայսրության տնտեսության զարգացման մեջ։

Արծարծվող թեման համակողմանի կերպով լուսաբանելու համար անհրաժեշտ էր կանգ առնել նաև մի շարք այնպիսի կարևոր հարցերի վրա, ինչպիսիք են գյուղի սոցիալական վիճակը, դերբեկությունների և ընդհանրապես սեպարատիստական տենդենցների, առևտրական ու վաշխառուական կապիտալի դերը, միասնական չափի, կշռի, փողի և այլ միավորների բացակայությունը, տարբեր շրջանների անհավասար զարգացումը և ուրիշ ներքին խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունը թողել են Թուրքիայի զարգացման պրոցեսի վրա։ Սակայն թվարկվող և ուշադրության արժանի ուրիշ հարցերի պարզաբանումը պահանջում է լրացուցիչ աշխատանք, որի կատարումը թերևս հնարավոր լինի ապագայում։

О ПРИЧИНАХ ЭКОНОМИЧЕСКОЙ ОТСТАЛОСТИ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

Доктор историч. наук О. Г. ИНДЖИКЯН

(Резюме)

Причины медленного развития и отставания Османской империи стали предметом исследования многих турецких социологов и историков. При освещении поставленного вопроса заметны две тенденции: подчеркивание особенностей развития и попытки взвалить причины экономической отсталости на внешние факторы, в частности на вмешательство европейских стран и иностранного капитала вообще, которые, безусловно, сыграли известную отрицательную роль. Между тем объективно-научное изучение и анализ фактов убедительно показывают, что как во многих других странах, так и в Турции решающее влияние на историческое развитие имели в основном внутренние факторы: общественный и государственный строй военно-феодальной империи, государственная собственность на землю, разорительная налоговая система, произвол и беззаконие, царившие в условиях разложения верхушки феодального общества. Весьма отрицательное воздействие имели господствующее влияние ислама на все отрасли жизни государства и национальная политика османского правительства. Все эти факторы давили главным образом на те элементы, которые представляли новые производительные силы, бы-

ли носителями капиталистических отношений и «прогресса цивилизации» (К. Маркс). Постепенное усиление влияния иностранного капитала, сравнительно «мирное» проникновение и завоевание им ключевых позиций в экономике страны усугубили это положение. Образовался союз внутренней реакции и империалистических держав, всячески консервировавший феодальные порядки и тормозивший развитие производительных сил Османской империи.